ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Էջմիածնի Մայր տաճարում կիրակի, 28 հունիսի 1970 թվականին, սուրբ պատարագի ժամանակ, «Հայր մեր»-ից առաջ, հանդիսավոր իրադրության մեջ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը Նորին Սրբություն Պողոս Զ Պապի նվերը՝ հայոց Առաքյալ ս. Բարթողիմեոսի աճյունը պարունակող մեծադիր խաչը, հանձնեց Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսին՝ կարգադրելով, որ այն զետեղվի Ավագ սեղանի վրա և այնտեղ պահվի 40 օր, որից հետո փոխադրվի Մայր տաճարի եկեղեցական սրբությունների խորանը և գուրգուրանքով պահվի Մայր տաճարում գտնվող նույն Առաքյալի ս. Աջի և մյուս մասունքների կողքին:

Ազգիս Վեհափառ Հայրապետը այս առթիվ Իր խոսքը ուղղելով ժողովրդին, վեր հանեց հոգևոր և պատմական նշանակությունը այս արարողության, քրիստոնեական սիրո ողջույն՝ բերեց բոլորին՝ Հռոմի ս. Պետրոս տաճարից և Սրբազան Քահանայապետից և ս. Բարթողիմեոս Առաքյալի մասունքը պարունակող խաչով օրհնեց բազմահազար հավատացյալներին, որոնք լցրել էին տաճարը և շրջափակը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

30 հունիս 1970 թ.,
Ս. Էջմիածին